ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Երևան « 23 » դեկտեմբերի 2021թ.

ՀՐԱՄԱՆ № 0389-Ա

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ1-4) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի եզրակացությունը և Սյուզաննա Օհանյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սյուզաննա Արմենի Օհանյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ1-4) պաշտոնին:

2. Փորձաշրջանի ընթացքում Սյուզաննա Օհանյանի փորձաշրջանի համակարգող նշանակել կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և

մոնիթորինգի վարչության պետ (ծածկագիր՝ 41-27.4-Ղ3-1)՝ Սասուն Համբարձումյանին:

3. Սյուզաննա Օհանյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2021 թվականի դեկտեմբերի 24:

Recoverable Signature

X

ՍՏԵՓԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Signed by: DAVTYAN STEPAN 3809890715

Ս.ԴԱՎԹՅԱՆ